



ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ

ՀԱՄԱՋԳԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄԸ

Հիմնաբառեր. աշխարհասփյուռ հայություն, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, Ջինժառայողների ապահովագրության հիմնադրամ, համազգային ապահովագրավճարներ, ազգային փուրք

Արմեն ՃՈՒՂՈՒԻՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1981 թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը (այժմ՝ ՀՊՏՀ): 1983-1986 թթ. սովորել է Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրայում և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական ասպիրանտի 2002 թ. պաշտպանել է դոկտորական արենսիտություն ՀՊՏՀ-ում: Հեղինակ է մոտ 180 գիտական հոդվածների, 16 ուսումնական ձեռնարկների, 4 մենագրության:

Արցախյան գոյամարտը մեզանից խլեց հազարավոր կյանքեր, ինչպես նաև հսկայական վնասներ պատճառեց տնտեսությանը: Պատերազմի արհավիրքների վերացմանն ու վնասների փոխհատուցմանը ողջ հայ ժողովուրդը՝ լինի հայրենիքում թե՛ Սփյուռքում, լծվեց փասնյակ փորհներ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նույնպես իր գործուն անձնակազմը ցուցաբերեց այդ ուղղությամբ: Մեր օրերում, երբ Արցախում ընթացան հինգերորդ սերնդի պատերազմական գործողություններ, մեծացան ոչ միայն պատերազմի սոցիալ-տնտեսական վնասները, այլև դրանց փոխհատուցման ծավալները: Այս առումով, անհրաժեշտություն է առաջանում ներդնելու պատերազմի սոցիալ-տնտեսական հետևանքների վերացման համազգային ապահովագրության համակարգ՝ հետպատերազմական սոցիալ-տնտեսական վնասների փոխհատուցման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման ակնկալիքով:

Որտեղ հապաղեցինք անկախության կառուցման երեսուն փորհներին:

Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերման առաջին իսկ տարիները համընկան Արցախյան գոյամարտի հետ: Եվ եթե այդ ընթացքում հնչում էին մեկնաբանություններ, թե մենք ապրում ենք «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրողությունում¹, ապա, մեր կարծիքով, դա հստակ պատերազմական իրավիճակ էր: Եվ եղավ այնպես, որ անցած երեսուն տարիներին այդպես էլ չկարողացանք լիարժեքորեն թիրախավորել երկ-

¹ Արթուր Մկրտիչյան, Ոչ պատերազմ ոչ խաղաղություն հասարակության» հայեցակարգը հետխորհրդային Հայաստանում, <http://boon.am/war-peace-society/>

րի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը պատերազմական սպառնալիքների դիմակայման և համապատասխան ռիսկերի կանխարգելման ուղղությամբ: Մեր համոզմամբ՝ նորանկախ հանրապետությունն իր զարգացման ճանապարհին առավել լրջորեն պետք է վերաբերվեր իրեն ուղեկցող Արցախյան գոյամարտին՝ կազմավորելով ռազմարդյունաբերական համալիր², ձևավորելով պատերազմական սոցիալ-տնտեսական փասաների փոխհատուցման ֆինսանսական ռեսուրսներ և ապահովագրական հիմնադրամներ: Սակայն, չգիտես թե ինչու, այդ հարցերում հապաղեցինք, որի հետևանքներն առավել ցավոտ են դրսևորվում վերջին պատերազմական գործողությունների ավարտից հետո:

Ինչու է անհրաժեշտ վերախմբագրել «Հայաստան» համահայկական հիմնադրամի առաքելությունը:

«Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» կարգախոսը որդեգրած հասարակությունների քաղաքականացումը, որպես կանոն, անխուսափելիորեն ուղեկցվում է վերջիններիս ռազմականացմամբ: Նման իրավիճակներում, օբյեկտիվ պայմաններին համապատասխան, այսպիսի հասարակություններն աչքի են ընկնում հնարավոր ռազմական-մոբիլիզացիոն խնդիրների սրացված սպասումներով, և նրանց զարգացման գործընթացն իրականացվում է ոչ թե մասնակցային, այլ մոբիլիզացիոն ժողովրդավարության հաստատմամբ:

Դրա վառ ապացույցը «Հայաստան» համահայկական հիմնադրամն է, որը ստեղծվելով 1992 թվականին, նպատակ ուներ ձևավորելու գլոբալ ցանց, աջակցելու ՀՀ և աշխարհի հայերին՝ մայր հայրենիքի և Արցախի կայուն ու համաչափ զարգացումն ապահովող ծրագրերի իրականացման գործում: Մինչ այժմ հիմնադրամի ջանքերով Հայաստանում և Արցախում կյանքի են կոչվել շուրջ 1300 խոշոր ծրագրեր ենթակառուցվածքների, առողջապահության, սոցիալական ապահովության, արվեստի և սպորտի բնագավառներում: Հիմնադրա-

մի աշխատանքները համակարգվում են 19 երկրում գործող 21 ստորաբաժանման և գործընկեր կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ և աջակցությամբ:

Հիմնադրամի տեսլականն այնպիսի համահայկական ցանցի ստեղծումն է, որը թույլ կտա Հայաստանին, հայությանն ու աշխարհին շարունակաբար համալրվել նորարարական գաղափարներով ու ծրագրերով՝ ստեղծելով զարգացման իրական հնարավորություն: Որպես նպատակ է ընտրվել նաև համահայկական ցանցային համակարգի ձևավորումը, որի միջոցով կարելի կլինի ապահովել ընդհանուր ինքնության վրա հիմնված աշխարհասփյուռ հայկական համայնքների, Հայաստանի և Արցախի համաչափ, կայուն ու փոխկապակցված զարգացումը:

Այս ամենով հանդերձ, միանգամայն պարզ է, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի առաքելությունը ներկայում պետք է վերափոխվի՝ ելնելով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության առջև ծառայած աշխարհաքաղաքական մարտահրավերներից: Եթե վերլուծենք Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերը, ապա պարզ կդառնա, որ դրանք բազմազան են և միմյանց հետ գրեթե կապ չունեցող (Երևանի բուսաբանական այգու ոռոգման ցանցի վերանորոգում, Դադիվանք համայնքում խմելու ջրի մատակարարում, Դանիել Ղազարյանի անվան երաժշտական դպրոցի վերանորոգում, Ալեքսանդր Մյասնիկյանի արձանի նորոգման աշխատանքներ և այլն)³, ինչը, մեր կարծիքով, նվազեցնում է դրա ռեսուրսային հատույցը՝ սերտ առնչություն չապահանջելով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ռազմական ներուժի զարգացման հետ: Ուստի առաջարկում ենք, որ Հիմնադրամի առաքելությունում հստակ շեշտադրումներ կատարվեն համազգային ներուժով երկու հանրապետությունների պաշտպանունակության շարունակական ամրապնդման վերաբերյալ:

² Արմեն Ճուղուրյան, Թավալա հեղափոխությունը և կապիտալի փախուստը, //www.aravot.am/2018/09/19/981457/
³ «Հայաստան» համահայկական հիմնադրամի պաշտոնական կայք, https://www.himnadram.org/hy/projects

Ինչ վերանայումներ են անհրաժեշտ «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամական ներհոսքերի կանոնակարգման ուղղությամբ:

«Հայաստան» համահայկական հիմնադրամն աշխատասփյուռ հայության հավաքական դրամական նվիրաբերումների կազմակերպական գործառույթների շրջանակ է՝ հիմնված առավելապես տարեկան դրամահավաք մարաթոնների վրա: Սակայն, ֆորսմաժորային իրավիճակներում, դիցուք՝ վերջին պատերազմի ընթացքում հավաքագրվեց ավելի քան 170 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2020 թվականի հոկտեմբերի 21-ին սկիզբ դրվեց նոր շարժման՝ «50 plus» անվանմամբ, նպատակ ունենալով ներդնել ոչ միայն հախտուն ձևով միանվագ, այլ ամսական կտրվածքով կանոնակարգված նվիրաբերումների համակարգ⁴:

Այն, որ ֆինանսական հոսքերը դեպի Հիմնադրամ պետք է կանոնակարգվեն, միանվագ մոտեցումից անցում կատարելով ամսական նվիրատվությունների, կարծում ենք՝ աներկբա է: Ընդ որում, անհրաժեշտ ենք համարում սահմանել «ազգային տուրք», որը պետք է վճարեն ՀՀ ռեզիդենտները՝ իրենց ամսական եկամտի 1%-ի չափով: Ի դեպ, նույնը, կամավորության սկզբունքով, կարելի է կիրառել նաև Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների նկատմամբ՝ անկախ բնակության վայրից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ամսական եկամուտներից գանձվող ազգային տուրքի վճարման պահանջն առաջարկում ենք իրականացնել օրենսդրական միջամտությամբ, մասնավորապես՝ լրացումներ կատարելով ՀՀ հարկային օրենսգրքում, իսկ Սփյուռքում բնակվող մեր հայրենակիցներից ազգային տուրքի գանձում կարող է կատարվել ազգային ինստիտուցիոնալ կառույցների միջնորդությամբ: Օրինակ՝ Ռուսաստանում բնակվող մեր հայրենակիցները «Հայաստան» համահայկական հիմնադրամին ազգային տուրք կարող են վճարել հայրենակցական միությունների գործողությունների համակարգմամբ, իսկ արևմտյան երկրներում բնակվողները՝ հայկական կազմա-

կերպությունների միջնորդությամբ, որոնք արդեն իսկ պաշտպանում են հայ ժողովրդի պահանջներն ու ազգային ձգտումները, ներկայացնում հայության հավաքական տեսակետը բոլոր մակարդակներում:

Այս պարագայում «Հայաստան» համահայկական հիմնադրամը հնարավորություն կունենա կանոնակարգված ձևաչափով՝ աշխարհասփյուռ հայությունից ամսական կայուն դրամական հոսքերի հավաքագրմամբ, ստացված միջոցներն ուղղելու պատերազմի սոցիալ-տնտեսական բացասական հետևանքների շարունակական վերացմանը:

Ինչպես պետք է հեղափոխվեն կանոնակարգել Ձինժառայողների ապահովագրության հիմնադրամին կադրավորվող վճարումները:

Ցավոք, պատերազմի ընթացքում զինժառայողների շրջանում ունեցել ենք հազարավոր զոհեր և տասնյակ հազարավոր վիրավորներ: 2017 թվականի հունվարի 1-ից հետո տեղի ունեցած դեպքերի համար ՀՀ-ում օրենսդրությամբ սահմանվում են հատուցումներ հետևյալ նվազագույն չափերով.

- զոհվելու կամ անհայտ բացակայող ճանաչվելու պարագայում՝ պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինժառայողին՝ 82.000.000 դրամ, ենթասպայական և շարքային կազմերի զինժառայողին կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձին՝ 70.000.000 դրամ, պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինժառայողին՝ 58.000.000 դրամ.
- առողջությանը պատճառված վնասի հետևանքով՝ զինժառայողի առաջին խմբի հաշմանդամության դեպքում՝ 58.000.000-ից մինչև 82.000.000 դրամ, երկրորդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 29.000.000-ից մինչև 53.000.000 դրամ⁵:

⁴ Տեղեկատվական կայք, <https://www.b.24.am/economy/261127.am>

⁵ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինժառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենք, 2016, հոդված 4:


Զինձառայողների ապահովագրության հիմնադրամը հիմնականում համալրվում է դրոշմանիշային վճարներով, որոնք կատարում են ֆիզիկական անձինք՝ օրենքով սահմանված կարգով, ամսական 1000 դրամի չափով: Սակայն, հարկ է նշել, որ միայն պատերազմի առաջին երեք շաբաթվա ընթացքում հայ ժողովուրդը հախուռն կերպով, առանց որևէ օրենսդրական պարտադրանքի 4,5 մլն ԱՄՆ դոլար է նվիրաբերվել Հիմնադրամին: Միաժամանակ, պետք է արձանագրել, որ ուշ թե շուտ նման ոգևորությունը կմարի, և այդ նվիրատվությունները կնվազեն, մինչդեռ զոհված և հաշմանդամ դարձած զինձառայողների ընտանիքների սոցիալական հոգսերը կմնան նույնը, որոնք պետք է փոխհատուցվեն ապահովագրության հիմնադրամից:

Այս առումով, առաջարկում ենք կատարել օրենսդրական փոփոխություն՝ փոխարինելով 1000 դրամ դրոշմանշային մուծումները՝ ՀՀ քաղաքացիների ամսական եկամուտների նկատմամբ 2% վճարումների սահմանմամբ: Այս դեպքում կվերականգնվի վճարումների արդարությունը և կվերախմբագրվի բոլորիս սոցիալական պարտավորվածությունը հետևյալ երկու

պարզ պատճառներով: Նախ՝ քաղաքացին, որ մի քանի տեղից եկամուտ է ստանում և յուրաքանչյուր դեպքում դրոշմանիշային վճարումներ կատարում, այլևս հնարավորություն չի ունենա ապահովագրական հիմնադրամից հետ ստանալու ամսական՝ մեկից ավելի անգամ կատարված մուծումները: Եվ երկրորդ, ինչն ավելի կարևոր է, ապահովագրական հիմնադրամին կատարվող մուծումները կիրականացվեն աճման կարգով՝ խուսափելով բարձր ու ցածր եկամուտ ստացողների ամսական մուծումների համահարթեցումից:

Ո՞րը կարող է լինել պատերազմի սոցիալ-տնտեսական հետևանքների համազգային ապահովագրության ֆինանսական կայունության մոդելը:

Պատերազմի սոցիալ-տնտեսական հետևանքների ապահովագրման գործընթացի նկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել համազգային մոտեցում՝ համախմբելով ոչ միայն կառավարության միջոցները, այլև յուրաքանչյուր հայ մարդու ֆինանսական կարողությունները: Այս առումով, առաջարկում ենք ապահովագրության մի մոդել, որը կգործի ըստ հանրային հավաքական ֆինանսական ներուժի (գծապատկեր 1):



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Պատերազմի սոցիալ-տնտեսական հետևանքների վերացման նպատակով առաջարկվող համազգային ապահովագրավճարների կազմն ու կառուցվածքը⁶

⁶ Կազմել է հեղինակը:

Եզրակացություն

Պատերազմի սոցիալ-տնտեսական հետևանքների վերացման նպատակով առաջարկվող համազգային ապահովագրավճարների կազմի ու կառուցվածքի համանման մոդելը հնարավորություն կտա լուծելու մի շարք խնդիրներ:

Առաջին, ապահովագրավճարների նկատմամբ կսահմանվի հավաքական պարտավորվածություն՝ ապահովագրական բեռը բաշխելով կառավարության և աշխարհի ցանկացած երկրում եկամուտ ստացող յուրաքանչյուր հայ քաղաքացու միջև: Այս պարագայում ակնառու կդառնա ապահովագրավճարների հավաքագրման գործընթացի արդարացիությունը, քանի որ ամեն մի հայ սեփական եկամտից կվճարի ազգային տուրք հայրենիքի անվտանգության ամրապնդման, ինչպես նաև պատերազմում զոհվածների ընտանիքների ու հաշմանդամների խնդիրների լուծման համար՝ այդպիսով իր մասնաբաժինն ունենալով նաև պետության անվտանգության ու պաշտպանվածության գործում:

Երկրորդ, ապահովագրավճարների ամսական կանոնակարգված վճարումները կհանգեցնեն ֆինանսական հոսքերի կայունությանը՝ միտված պատերազմի սոցիալ-տնտեսական վնասների շարունակական վերացմանը: Այսպիսով՝ կապահովվի նաև ֆինանսական պաշարների կանխատեսելիություն՝ վերջ դնելով ամբողջովին կախվածությանը միանվագ և հախուռն կերպով կատարվող նվիրաբերումներից, որոնց հավաքագրելիության կանխատեսումներն այնքան էլ իրատեսական չեն:

Երրորդ, տեղի կունենա ոչ միայն ապահովագրավճարների հավաքագրման աշխարհագրության շրջանակի, այլև ծավալների ընդլայնում՝ միաժամանակ, «Հայաստան» համահայկական հիմնադրամ կատարվող ամսական վճարումների կանոնակարգմամբ համախմբելով աշխարհասփյուռ հայությանը՝ հայրենիքի անվտանգության ամրապնդմանը սատարելու և սեփական ժողովրդի նկատմամբ հոգածություն ցուցաբերելու շատ կարևոր և օրախնդիր գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենք, 2016:
2. Արթուր Մկրտիչյան, «Ոչ պատերազմ ոչ խաղաղություն» հասարակության հայեցակարգը հետխորհրդային Հայաստանում, <http://boon.am/war-peace-society/>
3. Արմեն Ճուղուրյան, Թավշյա հեղափոխությունը և կապիտալի փախուստը, <http://www.aravot.am/2018/09/19/981457/>
4. «Հայաստան» համահայկական հիմնադրամի պաշտոնական կայք, <https://www.himnadram.org/hy/projects>
5. Տեղեկատվական կայք, <https://www.b.24.am/economy/261127.am>

Армен ДЖУГУРЯН*Доктор экономических наук, профессор, АГЭУ*

ПАНОРАМА ВОЙНЫ

НАЦИОНАЛЬНОЕ СТРАХОВАНИЕ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИХ ПОСЛЕДСТВИЙ ВОЙНЫ

Борьба Арцаха за выживание унесла тысячи жизней и нанесла огромный ущерб экономике Армении. На протяжении десятилетий весь армянский народ, будь то на родине или в диаспоре, работал над устранением последствий войны и возмещением ущерба. Правительство Республики Армения также проявило активную поддержку в этом направлении. В наше время, когда мы уже вынужденно вели боевые действия в Арцахе (по оценкам военных экспертов в пятом поколении), увеличивается не только социально-экономический ущерб войны, но и масштабы его компенсации. В этой связи необходимо ввести систему страхования общенациональных социально-экономических последствий войны с расчетом на более эффективную организацию послевоенного социально-экономического возмещения ущерба.

Ключевые слова: *армянская диаспора, Всеармянский фонд «Айастан», Фонд страхования военнослужащих, общенациональные страховые взносы, общенациональный сбор*

Armen TSHUGURYAN*Doctor of Economics, Professor, ASEU*

WAR PANORAMA

NATIONAL INSURANCE OF THE SOCIO-ECONOMIC CONSEQUENCES OF WAR

Artsakh's struggle for survival claimed thousands of lives and caused enormous damage to the Armenian economy. For decades, the entire Armenian people, whether in their homeland or in the diaspora, have worked to eliminate the horrors of war and make reparations. The Government of the Republic of Armenia has also shown active support in this direction. Nowadays, when we are already forced to conduct the fifth generation of hostilities in Artsakh, not only the socio-economic damage of the war is increasing, but also the scale of its compensation. In this regard, it is necessary to introduce a system of insurance of national socio-economic consequences of the war with the expectation of a more effective organization of post-war socio-economic damage compensation.

Keywords: *Armenian Diaspora, Hayastan All-Armenian Fund, Military Insurance Fund, national insurance premiums, national total tax*